

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 92

ք. Արտաշատ

< 25 / 09 > 2013թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ  
ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ  
ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի  
թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N1064-Ն որոշումը և Հայաստանի  
Հանրապետության Արարատի մարզպետի 2005 թվականի դեկտեմբերի 26 -ի » N 153  
որոշումը

Որոշում եմ.

1. Հաստատել Արարատի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական  
մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային,  
քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության  
փոխանակման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Արարատի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական  
մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային,


քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության պետի վրա:

ՄԱՐԶՊԵՏ



Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ



ԿԱՐԳ

« ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է մարզում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակի բնագավառում տեղեկատվության հավաքագրման և փոխանցման կարգը:

2. Տեղեկատվությունը պետք է ներառի տեղեկություններ կանխատեսվող և գրանցված ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

3. Ելնելով իրավիճակից ներկայացվում է օպերատիվ և ընթացիկ տեղեկատվություն:

4. Արտակարգ իրավիճակներին արձանագրման և իրավիճակի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվությունը տրվում է բոլոր շահագրգիռ կառավարման մարմիններին՝ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով:

5. Ընթացիկ տեղեկատվությունը ներառում է տեղեկություններ մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի մասին:

6. Տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ մարզի տարածքում շրջակա միջավայրի դիտարկում և ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի հսկողություն իրականացնող պետական մարմինները:


7. Տեղեկատվության հավաքագրումը և փոխտեղեկատվությունը իրականացվում է պետական կառավարման մարզային մարմինների կողմից:

8. Տեղեկատվությունը ներկայացվում է վերադաս մարմիններին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչությանը:

9. Տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն հավելված 2 -ում ներկայացված ցանկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ՝  Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ց Ա Ն Կ

« ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԲԱՆԱԿԱՆ ՄՇԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱՆԿՆԵՐԻ

ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒՍԱՆԱԿՄԱՆ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Տեղեկատվություն	ՈՒՄ Է հաղորդվում	Տեղեկատվության պարբերականությունը
1	2	3	4	5
1	<p>Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,</p> <p>Հայաստանի Հանրապետության առողջապահության</p>	<p>Տեղեկատվություն</p> <ul style="list-style-type: none"> <li>- Կարանտինային հիվանդությունների արձանագրման և կապածի դեպքում:</li> <li>- Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիաների արձանագրման դեպքում:</li> <li>- Այլ վարակիչ և մակարոնային, տարափոխիկ հիվանդությունների արձանագրման դեպքում:</li> <li>- Այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների և թունավորումների, անհայտ ախտածագման հիվանդությունների արձանագրման դեպքում:</li> <li>- Ոչ վարակիչ (սննդային, օձի խայթոցից և այլն) թունավորումների արձանագրման դեպքում:</li> <li>- Ջրատար համակարգի վթարի և մարդկանց զանգվածային հիվանդացության (այդ թվում սպառնալիքի դեպքում):</li> </ul>	<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն,</p> <p>Հայաստանի Հանրապետության</p>	<p>արձանագրելիս անհապաղ</p>

	<p>նախարարության պետական հիգիենիկ հավահամաճարակային տեսչության Արարատի մարզային կենտրոն</p>	<p>- Խմելու ջրում սանիտարական նորմերին չհամապատասխանող արդյունքների (որոնք կարող են բերել մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության) արձանագրման դեպքում:</p>	<p>Արարատի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,</p>	
<p>2</p>	<p>Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,</p> <p>«Հանրապետական անասնաբուժարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» Պետական Ոչ առևտրային կազմակերպության Արարատի մարզային մասնաճյուղ,</p> <p>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի</p>	<p>- Կենդանիների (գյուղատնտեսական և վայրի) զանգվածային հիվանդացության, անկումների արձանագրման դեպքում:          - Կենդանիների (այդ թվում և արտասահմանից ներմուծված) հատուկ վտանգավոր ինֆեկցիաների արձանագրման, կասկածի դեպքում:          - Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիաների արձանագրման դեպքում:          - Անհայտ և անսովոր հիվանդացության դեպքերի արձանագրման դեպքում:          - Կենդանիների անհայտ ախտածագման թունավորումների արձանագրման դեպքում:          - Բոյսերի զանգվածային հիվանդացության դեպքում:</p>	<p>Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն</p>	<p>արձանագրելիս անհապաղ</p>

	անվտանգության պետական ծառայության Երարատի մարզային կենտրոն			արձանագրելիս անհապառ
3	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն,	<ul style="list-style-type: none"> <li>- Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ուժեղ քամիներ, անձրևային վարարումներ, հեղեղումներ) արձանագրման դեպքում:</li> <li>- Ճառագայթաակտիվ նյութերի արտանետմամբ վթարներ և պատահարներ արձանագրման դեպքում:</li> <li>- Տեխնաձին վթարների արձանագրման դեպքում:</li> <li>- Քիմիական վտանգավոր նյութերի արտանետումով վթարների արձանագրման դեպքում:</li> <li>- Շրջակա միջավայրում քիմիական վտանգավոր նյութերի սահմանային թույլատրելի խտությունների արձանագրման դեպքում:</li> <li>- Ռազմական թունավոր նյութերի կիրառման (կիրառման վտանգի), արտանետումով վթարների արձանագրման դեպքում:</li> <li>- Խմելու ջրի, ոռոգման ջրի, կոյուղու ջրատար համակարգի խոշոր (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության և հեղեղումներ առաջացնելու սպառնալիք ներկայացնող) վթարների արձանագրման դեպքում:</li> <li>- Մարդկանց, կենդանիների զանգվածային հիվանդացության արձանագրման դեպքում:</li> <li>- Անտառներին և մշակաբույսերի ցանքատարածություններին վտանգ ներկայացնող հրդեհների արձանագրման դեպքում:</li> </ul>	<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մարզային փրկարարական վարչություն,</p> <p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակ ա-յին տեսչության Արարատի մարզային կենտրոն,</p> <p>Հայաստանի Հանրապետության Արարատի</p>	


			նարզպետարանի աշխատակազմի գլխավոր տնտեսության և բնապահպանության վարչություն	Վարչության
4	<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոտեղեկատվության կենտրոնի» Պետական Ոչ առևտրային կազմակերպության Արարատի մարզային ծառայություն</p>	<p>- Հիդրոտեղեկատվության տվյալներ: - Տվյալներ շրջակա միջավայրի ճառագայթային ֆոնի վերաբերյալ:</p>	<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն, մյուս կառույցներին՝ ըստ անհրաժեշտության</p>	<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն՝ օրը երկու անգամ: Շեղումներ արձանագրելիս անհապաղ</p>
5	<p>«Հայ ջրնուղկույրի» Փակ Բաժնետիրական ընկերություն</p>	<p>- Խմելու ջրի, ոռոգման ջրի, կոյուղու ջրատար համակարգի խոշոր (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության և հեղեղումներ առաջացնելու սպառնալիք ներկայացնող) վթարների արձանագրման դեպքում: - Խմելու ջրում սանիտարական նորմերին չհամապատասխանող արդյունքների (որոնք կարող են բերել</p>	<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար</p>	<p>Հայաստանի Հանրապետության արձանագրելիս անհապաղ</p>



		<p>մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացության) արձանագրման դեպքում:</p>	<p>ծառայության մարզային ներկայարարական վարչություն,</p> <p>Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,</p> <p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահանճարակային տեսչության Արարատի մարզային կենտրոն,</p> <p>Հայաստանի Հանրապետության Արարատի</p>	
--	--	--	--	--

			մարզի տարածքի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՄԱՆԻ  
ՄԱՐԶԻ ԲՆԱՊԱՀԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐ



Ա. ԿԱՐԴԱՆՅԱՆ